4457

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«14» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0044-23

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ **«Շիրակ-11» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն**
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 13 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0044-23

«14» 03 2023թ.

«Շիրակ-11» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման /ՇՄԱՌԳ/ հաշվետվություն
Իրականացման վայրը՝	Շիրակի մարզի

Ներածական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանկաան խնդիրների համալիրի իրականացմամբ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման (ռէգ) հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Շիրակ 11՝ Անուշավան, Լուսակերտ, Հոռոմ, Հովտաշեն, Մեղրաշեն, Նոր կյանք, Սարատակ, Վարդաքար, Փանիկ) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N *ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/1*):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) ներկայացված ՄՄՀՏՊՓ նախագիծը՝ /ՇՄԱՌԳ հաշվետվությամբ/ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

ՇԻՐԱԿԻ տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի «Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ» բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ համապատասխան, հաշվի առնելով նշված համայնքների 2017-2021թթ. զարգացման ծրագրերը:

Նկարագրական մաս. Շիրակի մարզը վարչատարածքային միավոր է Հայաստանի հանրապետության հյուսիս-արևմուտքում, մարզկենտրոն Գյումրի քաղաքը գտնվում է

Երևանից 118 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1550 մ է:

Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է՝ Հայաստանի Լոռու մարզին և հարավից՝ Հայաստանի Արագածոտնի մարզին:

Երկրաբանական կառուցվածքի տեսակետից տարածքը ընդհանուր առմամբ ունի համեմատաբար միատարր հրաբխային կազմություն և երիտասարդ հասակ:

Շիրակի մարզը լինելով ծովի մակերևույթից մոտ 1 500-2000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևութից մոտ 1 500-1700 մ, իսկ 55-ը՝ 2000 մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը:

Մարզի տարածքում են գտնվում Արփի լիճ-ջրամբարը, Ախուրյանի ջրամբարի հայկական հատվածը և Մանթաշի ջրամբարը:

Սևանա լճից հետո մեծությամբ երկրորդ ջրային ավազանը և մարզի միակ լիճը Արփին է, որն ունի ծովի մակերևույթից ավելի քան 2000 մ բարձրություն: Լճից սկիզբ է առնում Արաքս գետի ձախակողմյան վտակ՝ Թուրքիայի հետ սահմանային, Ախուրյան գետը: Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն.մ^3 ծավալով խոշորագույնն է հանրապետությունում: Ախուրյան գետի վրա գործում են 8 ՀԷԿ-ներ:

Շիրակի մարզի տարածաշրջանի ՄՄՏՀՆ նախագիծը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր,հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար:

Բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ շրջակա միջավայրի տարրերի (ջուր, օդ, հողաբուսական ծածկույթ, կենդանական աշխարհ) պահպանության միջոցառումների մշակումը սերտորեն կապված է տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրների հետ, բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրված է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական, տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Արփի լճի ջրահավաք ավազանի մշակովի լանդշաֆտները կազմված են հիմնականում

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հացահատիկի և վուշի դաշտերից: Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդամթերքի և խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի տարածքի երկրաբանական կառուցվածքի բազմազանության շնորհիվ բազմազան են նաև ընդերքի հարստությունները: Մարզում լայն տարածում ունեն տուֆը, պեմզան, բազալտը, անդեզիտը, կրաքարը, պեռլիտը, հրաբխային խարամն ու մոխիրը, զանազան կավերը և շատ ուրիշ շինանյութեր:

Շինանյութերի մեջ առաջնակարգ նշանակություն ունի տուֆը, որի պաշարներով հանրապետության մարզերի մեջ Շիրակի մարզը գրավում է առաջին տեղը: Շիրակի մարզում առավել հայտնի են Արթիկի, Անիպեմզայի, Պեմզաշենի և Գյումրիի տուֆի հանքավայրերը: Պեմզայի պաշարները Շիրակում գնահատվում են ավելի քան 100միլիոն մ^3: Մարզի տարբեր շրջաններում կան պեռլիտի, օբսիդիանի, հրաբխային խարամի, ավազի բազալտի, անդեզիտի պաշարներ, որոնք շահագործվում և օգտագործվում են հիմնականում մարզի սահմաններում: Բազմապիսի կավերի և դիատոմիտների պաշարներ կան մարզի տարբեր շրջաններում: Շիրակը հայտնի է նաև արդյունաբերական նշանակություն ունեցող կրաքարի պաշարներով:

Մարզի ոռոգելի տարածքը կազմում է 27.3 հազ.հա:

Մարզում կառուցված է 9 ջրամբար, գումարային 671.0 մլն.մ^3 ծավալով, որոնց համար ջրաղբյուր է հանդիսանում Ախուրյան գետը: Ջրանցքների վթարային հատվածների վերականգնման երեսպատման համար մշակվել է տիպարային լուծումներ:

«Շիրակ-11» (Անուշավան, Փանիկ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Հոռոմ, Վարդաքար, Հովտաշեն, Սարատակ, Լուսակերտ բնակավայրեր) միկրոշրջանը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևելյան մասի Արթիկի տուֆերի հանքային դաշտի սահմաններում:

Առկա վիճակի վերլուծության նպատակն է բացահայտել ձևավորված կառուցվածքում առկա բացերը, և հեռանկարային առաջարկներում փորձել լրացնել դրանք և կատարելագործել առկա քաղաքաշինական միջավայրը՝ ստեղծելու մարդու հիմնական կենսական պահանջների բավարարմանն ու տեղաբնակների առօրյան լիարժեք կազմակերպելուն միտված համարավետ կենսամիջավայր:

«Շիրակ-11» միկրոռեգիոնը գտնվում է Շիրակի բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանի արևելյան մասում, բուսական աշխարհը ներկայացված է Շիրակի ֆլորիստիկ շրջանի սևահող ալրային կարբոնատային և սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերի վրա գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող տարածքներով:

Սույն նախագծով նախատեսված միջոցառումները կիրագործվեն արդեն իսկ գոյություն ունեցող կառույցապատման սահմաններում, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Գլխավոր հատակագծում տեղ գտած շինարարական աշխատանքների ժամանակ ծառահատումներ չեն իրականացվելու: Ծառա-թփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով նախագծման ընթացքում ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերն ընտրվել են այնպես, որ դրանք հնարավորին քիչ չափով հատվեն ծառերի հետ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարների կառուցման ընթացքում պայթեցման և ամենահնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլնի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրաձավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

«Շիրակ-11» միկրոռեգիոնի բնակավայրերի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Մարզում առավել հայտնի սելավները հիմնականում տարածված են Շիրակի լեռնաշղթայի հարավային լանջերին: Այստեղ առավել սելավաբեր են Գյումրի, Հացիկ, Ջաջուռ, Մուսայելյան, Կամո, Հովիտ վտակները, որոնք որպես սելավներ գործում են հատկապես ամառային հորդառատ, հաճախ կարկտախառն անձրևների պատճառով: Սելավաբեր է նաև Կարկաչուն գետի Արթիկջուր վտակը: Գյումրի, Ջաջուռ, Արթիկջուր վտակների հուներով հոսող սելավները շատ հաճախ մեծ ավերածությունների պատճառ են դառնում:

Սելավի դեմ պայքարի հիմնական միջոցներն են հանդիսանում հողաբուսածածկույթի ամրացումն ու պահպանումը, լեռնալանջերի անտառապատումը, գետահուների կանոնավորումն ու ամբարտակումը և այլ ջրատեխնիկական միջոցառումներ:

Գարնանային հնարավոր վարարումների և սելավների ռիսկերը նվազեցնելու նպատակով Շիրակի մարզի Վարդաքար բնակավայրում ընթանում են բնակավայրով անցնող սելավատարի հունի մաքրման աշխատանքներ, իրականցվել է շուրջ 180 մետր երկարությամբ հատվածի մաքրման աշխատանք:

Մարզի տարածքում սողանային երևույթները տարածված են հյուսիսային հատվածում Աշոցքի տարածաշրջանում և միկրոռեգիոնի տարածքում սողանքները բացակայում են:

«ՇԻՐԱԿ-11» միկրոռեգիոնի հողածածկույթը հիմանականում ներկայացված է սևահող ալրային կարբոնատային և սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերով:

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝

- ավտոտրանսպորտի, արդյունաղերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները;
- արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, համայնքների կանաչապատումը, թափոնների

կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

«ՇԻՐԱԿ-11» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 11820,58 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 12703 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Բնակչության հաշվարկային թվաքանակով առաջին տեղում է Անուշավան բնակավայրը՝ միկրոռեգիոնի ողջ բնակչության 15.87 %-ը, իսկ ամենավերջինը՝ Հովտաշեն բնակավայրը՝ 2.8 %-ը:

Շիրակ-11 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի զբաղեցրած տարածքը.

NN	Բնակավայր	Բնակավայրի զբաղեցրած տարածքը /հա/	%-ը միկրոռեգիոնի ողջ տարածքի նկատմամբ	NN	Բնակավայր	Բնակավայրի զբաղեցրած տարածքը /հա/	%-ը միկրոռեգիոնի ողջ տարածքի նկատմամբ
1	Անուշավան	1134.52	9.6	6	Վարդաքար	945.33	8.0
2	Փանիկ	1784.68	15.1	7	Հովտաշեն	388.92	3.3
3	Մեղրաշեն	1588.08	13.4	8	Սարատակ	1032.92	8.7
4	Նոր Կյանք	1275.12	10.8	9	Լուսակերտ	663.94	5.6
5	Հոռոմ	3007.07	25.4	Ընդհանուր		11820.58	100

/հ	Բնակավայրը	Առկա բնակչության թվաքանակը 2021թ. /մարդ/	Հաշվարկային բնակչություն /մարդ/	%-ը միկրոռեգիոնի ողջ բնակչության նկատմամբ (հաշվարկային)
ՇԻՐԱԿ-11 միկրոռեգիոն				
1	Անուշավան	2002	2202	15.8
2	Փանիկ	2948	3243	23.2
3	Մեղրաշեն	1243	1367	9.8
4	Նոր Կայնք	1565	1722	12.3
5	Հոռոմ	1811	1992	14.3
6	Վարդաքար	693	762	5.5
7	Հովտաշեն	351	386	2.8
8	Սարատակ	1460	1606	11.5
9	Լուսակերտ	630	693	5.0
Ընդհանուր		*12703*	*13973*	*100*

Համայնքի բաղադրիչ բնակավայրերի տարածքների անհամաչափությունը՝ փոքրագույնը կազմում է 3.3% (Հովտաշեն), ամենամեծ բնակավայրի զբաղեցրած տարածքը համայնքի ողջ տարածքի նկատմամբ կազմում է 25.4 % (Հոռոմ):

Տարածաշրջանի գյուղատնտեսության հիմնական ճյուղը հացահատիկային կուլտուրաների մշակումն է: Մշակում են նաև շաքարի ճակնդեղ, բանջարեղեն, կտավատ, կերային կուլտուրաներ և այլն: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ ու անասնապահությամբ:

Շիրակի մարզը Հայաստանի Հանրապետության առավել սակավ կանաչապատ տարաքներ ունեցող մարզերից է: Բացակայում են բնական անտառները: Ծառաբուսական ծածկույթը հիմնականում առկա է սահմանափակ նշանակության և հատուկ նշանակության կանաչ տարածքների տեսքով՝ բնակչության տնամերձ հողամասերում առկա և ճանապարհամերձ սանիտարական նշանակության և մայթերի ծառատնկումների հաշվին:

Քաղաքաշինության մեջ կանաչապատումը հատակագծման, կառուցապատման, բնակավայրի բարեկարգման միջոցառումների ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է և իրագործվում է գիտականորեն հիմնավորված սկզբունքներով և նորմատիվներով:

Հարավային շրջաններում կանաչապատման գլխավոր խնդիրն է փողոցների, հրապարակների, բակերի և կառույցների պաշտպանումը գերտաքացումից, հյուսիսային շրջաններում՝ սառը քամիներից, ձնահյուսերից: Արդյունաբերական խոշոր կենտրոններում կարևոր է կառուցապատված տարածքի աերացիան (օդահագեցում), որն իրագործվում է տարածքը խոշոր կանաչ զանգվածներով մասնատելու միջոցով:

Միկրոռեգիոնի բնակավայրերի գյուղատնտեսական հողերը, բնակավայրերը, ջրամբարները, ճանապարհները, բնական և մարդածին անբարենպաստ գործոններից պաշտպանելու նպատակով ստեղծված են արհեստական անտառներ և անտառաշերտեր:

Միկրոռեգիոնի ավտոտրանսպորտային գլխավոր առանցքը Մ-1 միջպետական նշանակության ավտոմայրուղին է՝ Երևան-Գյումրի-պետական սահման ծրագծով և միկրոռեգիոնի տարածքով հյուսիս-հարավ ուղղությամբ ձգված: Դիտարկվող տարածաշրջանը գտնվում է Մ-1 միջպետական ճանապարհի Մարալիկ-Գյումրի հատվածի աջ կողմում: Տարածաշրջանով է անցնում հանրապետական նշանակության Հ-21 ճանապարհի Հոռոմ-Արթիկ հատվածը՝ հանդիսանալով արևելք-արևմուտք ուղղությամբ միկրոռեգիոնի երկրորդ տարնսպորտային առանցքը:

Միկրոռեգիոնի բնակավայրերի կենտրոնական փողոցները հիմնականում գտնվում են բարվոք վիճակում, ինչը չի կարելի ասել երկրորդային փողոցների վերաբերյալ:

Շիրակի մարզի մթնոլորտային օդի որակը հիմնականում պայմանավորված է ասֆալտի և բետոնի գործարանների, ավտոտրանսպորտի և հանքարդյունաբերության արտանետումներով, ինչպես նաև բնակչության կողմից ձմռան ամիսներին զանազան քիմիական բաղադրության նյութերի այրմամբ:

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին:

Հեռանկարում նախատեսված է բոլոր ձեռնարկությունների համար 5-10% արտադրողականության աճ: Ընդամենը արդյունաբերական արտանետումները կազմում են 67,75 տ/տարի:

Հեռանկարում նախատեսված է ջեռուցման համար արևային էներգիա:

Անտառապատկան շուրջ 4 405.3 հա տարածքներից ներկայումս տնկարկներ կան ընդամենը 2 033 հա-ի վրա: Վերջին տարիներին մարզում հիմնվել է պետական ֆոնդի շուրջ 160 հա նոր անտառազանգված, իսկ համայնքներում ավելի քան 40 հա համայնքային անտառ:

Վերջին տարիներին մարզում իրականացվել են ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման մեծ ծավալի աշխատանքներ, որի արդյունքում զգալիորեն կրճատվել են ջրային ռեսուրսների անհարկի կորուստները: Զգալի աշխատանքներ են իրականացվել մարզի ջրամբարների վերանորոգման, պատվարների ամրացման (Թավշուտ, Կառնուտ, Վարդաքար) ուղղությամբ: Ընթացքի մեջ են Կապսի ջրամբարի կառուցման աշխատանքները, որոնց առաջին փուլում պլանավորվել է կուտակել 25 մլն մ 3 ջուր:

Միկրոռեգիոնի տարածքի հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դաս– թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը բավարար: Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

Հողերի պահպանության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է հողի մշակման ժամանակակից մեթոդների ներդրում, քիմիական պարարտանյութերի օգտագործման նվազեցում, լքված հանքավայրերի վերագնահատում և տարածքների վերականգնում (ռեկուլտիվացիա), ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ընդլայնում:

ՇԻՐԱԿ-11 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ /Ձև 3/				
	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	*Չափման միավոր*	*Փաստացի*	*Հեռանկարային*
1	ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ	հա	11820.582	11820.582
2	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	1282.02	1333.8205
3	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	152.07	127.1428
4	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	90.162	96.202
5	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	146.71	298.5318
6	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	16.27	16.27
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	9919.68	9735.0449
8	ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	3.03	3.03
9	ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	210.64	210.54

Քանի որ հողային ֆոնդում պահուստային հողեր չկան, ապա հողերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո ընդհանուր տարածքի մակերեսը փոփոխության չի ենթարկվի:

Վերջին տարիների մոնիտորինգային դիտարկումները ցույց են տալիս, որ մարզի հողային ռեսուրսների գրեթե 40%-ը տարբեր աստիճանի էռոզացված են, որը, բացի բնակլիմայական անբարենպաստ պայմաններից, հետևանք է նաև ոչ կանոնակարգված գյուղատնտեսական աշխատանքների (գերարածեցում, ոռոգման համակարգերի անբարեկարգ վիճակ, հեղեղումների, ճահճացման դեմ պայքարի և ցանքաշրջանառության բացակայություն):

Հողերի բարելավման նպատակով մարզի շուրջ երկու տասնյակ համայնքների արոտավայրերում և խոտհարքներում իրականացվել են ջրարբիացման և բարելավման (քարհավաքի, հարթեցման, խոտաբույսերի ցանքի) աշխատանքներ, կանոնակարգվել են հեռագնա ալպիական արոտավայրերում արածեցման գործընթացները, որոնց արդյունքում զգալիորեն կրճատվել է լանջային էրոզիան:

Գյուղատնտեսական հողերի ընդհանուր չափը կազմում է 9919.68 հա: Առավել մեծ պաշար ունեցող Հոռոմ բնակավայրի հողերի մակերեսը կազում է մոտ 2264 հա, իսկ փոքրագույն՝ Հովտաշեն բնակավայրինը՝ 323.91 հա:

Վարելահողերի ընդհանուր մակերեսը գյուղատնտեսական հողերի ընդհանուր պաշարում կազմում է մոտ 6500 հա:

Գյուղատնտեսական հողերը խնայողական օգտագործելու նպատակով հարկավոր է կայուն գյուղատնտեսության կիրառում, որը ներառում է շահեկան արտադրական տարածքները, էկոլոգիական միջավայրը, տեղական և ընդհանուր տնտեսական շահերը:

Առաջնային ուղղություններ են դառնում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման և զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը:
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնության հուշարձաններին վնաս պատճառումը:
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում:
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում:
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ,
- նախատեսել աղբի տեսակավորում:

Տարածքային պլանավորման նախագծով զբաղեցրած տարածքների էական փոփոխություն չի նախատեսվում:

Համապատասխան տարածքային զարգացման հայեցակարգի բնակչության աճը հիմնականում պահպանում է վերջին տարիների տեղի ունեցող միտումները: Հիմնվելով Շիրակի տարածաշրջանի տարաբնակեցման համակարգի վերլուծության վրա, նախատեսվում է դիմել բնակավայրերի տարածքային աճի որոշակի սահմանափակումների: Առկա վիճակով գրեթէ բոլոր բնակավայրերի բնակելի տարածքներում առկա են բազմաթիվ տնամերձ հողամասեր առանց կառուցապատման: Բնակչության աճի գործակիցը սահմանված է մինչև 10%: Տարածաշրջանի բնակչության հաշվարկային թիվը կազմում է 13973 մարդ:

Հեռանկարային քաղաքաշինական կազմակերպման հիմքում դրվել է բնակավայրերի կենսամիջավայրի բարենպաստությունն ու հարմարավետությունն ապահովելուն միտված բոլոր անհրաժեշտ նախադրյալները:

Հեռանկարային հատակագծային կառուցվածքը ձևավորելիս խնդիր է դրվել բնակչության համար ձևավորել առավել հարմարավետ, ապահով ու անվտանգ, գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված կենսամիջավայր:

Կանաչապատման գործընթացն իրականացնելիս նախատեսվում է օգտագործել տեղական կլիմայական պայմաններին և կոնկրետ նպատակների համար հարմարեցված (քամապաշտպան նպատակների համար՝ 70% խտությամբ սաղարթով, վնասակար արտանետումներից և փոշուց պաշտպանությանն ուղղված՝ ուղղաձիգ և հորիզոնական բուսատեսակների հաջորդական տնկումներ, օդափոխության ապահովման և օդի շրջանառության կազմակերպման համար՝ 50-ից ցածր խտությամբ սաղարթներով, ձայնամեկուսացման համար՝ ուղղաձիգ ծառատնկումներ, հողի սանիտարական հատկանիշներն ապահովելու և/կամ հակասողանքային միջոցառումների իրականացմանը միտված՝ արմատային խիտ համակարգով և սանիտարական հատկանիշներով օժտված) ծառատնկումների իրականացում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 95,2 %-ը:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 858,63 տ/տարի:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից համայնքներից տարածաշրջանի տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 1,15 մլն. դրամ/տարի:

Հեռանկարում արտանետումները ջեռուցումից կնվազեն տարեկան 46,59 տ/տարի՝ ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների:

Դիտարկվող բնակավայրերը գտնվում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում և Մանթաշ գետի ջրավազանում:

Նշված համայնքների տարածքում գետ է թափվում տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

«Շիրակ- 11» միկրոռեգիոնի բնակավայրերի հոսքաջրերի մաքարման նպատակով նախատեսվում է գշխավոր կոլեկտերի կառուցում, որը հեռացման ենթակա հոսքջրերը կտեղափոխի Ազատա բնակավայրի տարածքում նախատեսվող մաքարման կայան/ առաջարկվում է տեղադրել կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի կառուցում ≈ 800մ³/օր հզորությամբ:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական բնակավայրերում, նախատեսված է տեղադրել գործարանային արտադրության, տարբեր հզորության լոկալ կենսաբանական մաքրման սարքավորումներ: Նշված սարքավորումներն ունեն բազմաստիճանային մաքրման կառուցվածք: Մաքրման արդյունավետությունը 98%:

«Շիրակ- 11» միկրոռեգիոնից Ախուրյան գետ թափվող կեղտաջրերի քանակը կազմում է տարեկան 765,02 հազ.մ³ / տարի: Կենսաբանական մաքրման կայանները կանխարգելում են գետի աղտոտվածության հետագա ավելացումը: Գետի աղտոտվածության մակարդակը հեռանկարում կմնա անփոփոխ:

Նշված համայնքների սահմաններում, գետի ջրերի աղտոտվածության մակարդակը կգնահատվի՝

Ըստ սանիտարական ռեժիմի – բարձր,

Ըստ զգայարանական ցուցանիշների – արտակարգ բարձր,

Ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների - բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ ծրագրով նախատեսված մաքրման կայանների առկայությունը կկանխարգելի նշված գետի հետագա աղտոտումը:

«ՇԻՐԱԿ-11» միկրոռեգիոնի բնակավայրերում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքների համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնակավայրերի տարածքները անբարենպաստ և վտանգավոր բնական երևույթներից պաշտպանելու նպատակով նախատեսվում է հեղեղատար կառույցների իրագործում, որոնց միջոցով կկանխվի հեղեղային հոսքերից հողատարածքների ողողումն ու քայքայումը:

«Շիրակ-11» միկրոռեգիոնում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը:

Բնակավայրերի տարածքներով հիմնականում անցնում են տեղական նշանակության ճանապարհներ և ավտոմայրուղի Հ-75:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 70 մեքենա: Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերում տեղադրված են աղբի համար նախատեսված կոնտեյներներ: Աղբահանությունն իրականացվում է շաբաթը 1-2 անգամ, աղբը տեղափոխվում է հիմնականում Արթիկ քաղաքի աղբավայր:

Միկրոռեգիոնի բնակավայրերի սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1282,12 հա:

Բնակչության թիվը կազմում է 12703 մարդ ըստ մարզպետարանի տվյալների: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 3175,75 տ/տարի:

Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 13973 մարդ: Թափոնների ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի≈ 3493,25 տ/տարի:

Ներկայումս աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Հաճախակի են աղբի կուտակումները:

Մարզի գյուղական բնակավայրերն ունեն ավելի վատ կազմակերպված և հաճախ բազմաթիվ փոքր աղբանոցներ:

Միկրոռեգիոնի տարածքում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը՝ 4, ներկայումս «Շիրակ-11» միկրոռեգիոնում աղբավայրերի գտնվելու վայրերն են՝ Մեղրաշեն 1 հա, Նոր Կյանք 0,5 հա, Վարդաքար 0,2 հա, Հովտաշեն՝ 05 հա:

Նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքի համար նախատեսվի տեսակավորման և վերամշակման համար աղբի հեռացման վայր:

Հիմք ընդունելով Շիրակի մարզի ԿԿԹԿ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, այդ թվում գոյացող ու կանխատեսվող թափոնների ծավալը առաջարկվում է ՀՀ Շիրակի մարզում ունենալ մեկ 20 հա տարածքով, 20 տարվա շահագործման ժամկետով ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր:

Աղբավայրի տեղադիրքի ընտրությունը կատարվել է մարզի աղբահանության տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքներով ութ տարբեր տեղադիրքերի գնահատման և համեմատման միջոցով, որի արդյունքներով Բենիամին համայնքին հարող տարածքը առավել հարմարն է գնահատվել տարածաշրջանում ապագա ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի հիմնման համար:

Աղբավայրի համար նախատեսվող տեղանքը գտնվում է Բենիամին համայնքի վարչական տարածքի արևմտյան մասում գտնվող լեռնագագաթի հյուսիսային լանջերի մի շարք հովիտներում, որը հիմնականում արոտավայր է հանդիսանում: Դիտարկվող տարածքը մոտ 50 հա է կազմում, որից 20 հա-ն կարող է ընդգրկվել աղբավայրում:

Տարածքի երկրաբանական և աշխարհագրական նկարագիրը համապատասխանում է աղբավայրի կառուցման համար պահանջվող ֆիզիկաերկրաբանական չափանիշներին գտնվելու է Գյումրիի հարավային սահմանից

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մոտ 8 կմ հեռավորության վրա, որին կարելի է մոտենալ մարզի հյուսիսից հարավ ձգվող M1 մայրուղիով:

Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Հեռանկարում սպասվում է թափոնների քանակի ավելացում ≈ 10%-ի չափով:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 0,7 տ/տարի:

Դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերում առկա գերեզմանոցների ընդհանուր թիվը կազմում է 17, որոնցից գործող են 10-ը՝ 19.42 հա մակերեսով: Եվս 7 գերեզմանոցներ՝ 1.3 հա մակերեսով, չեն գործում:

Ընդլայնման կարիք ունեն Մեղրաշեն և Վարդաքար բնակավայրերի գերեզմանոցները՝ համապատասխանաբար 0.89 և 0.61 հա մակերեսով:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում:

Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Ներկա դրությամբ գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներևայլն) կազմում են՝ համայնքներում 0,9 հա: Շինարարական նորմերի և «Կառավարության 2018 թ. Փետրվարի 08-ի N 108-ռ» որոշման համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ:

Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56:

Համայնքներում ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը կկազմի 16,76 հա:

Բոլոր համայնքները՝ ընդհանուր օգտագործման կանաչ գոտի՝ 16,76/12 հա, սահմանափակ օգտագործման՝ 1153,908/825,81հա, ընդհանուր կանաչ զանգված՝ 1170,668 / 837,8 հա/մ²/մարդ:

Միկրոռեգիոնի տարածքի հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով և նոր շենքերի և շինությունների տեղադրման ընտրությունը սահմանափակված չէ: Հողերի աղտոտվածության մակարդակի փոփոխություն չի կանխատեսվում, քանի որ արդյունաբերական օբյեկտների գործարկում «Շիրակ-11» միկրոռեգիոնի տարածքում նախատեսված չէ:

Կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ «ՇԻՐԱԿ-11» միկրոռեգիոնի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,

- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման և տեսակավորման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում(սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ,
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 24,48 տ/տարի,
- անցնել աղբի տեսակավորման,
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմանբ, անասնապահության, հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման կայանների շահագործում, թափոնների կառավարում), տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

Պատճառաբանական մաս. «Շիրակ-11» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված 9 գյուղական բնակավայրերի համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ հաշվետվությունում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված բնակելի տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել են Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կադաստրի կոմիտե, Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, Շիրակի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է:

Ծրագրի ազդեցության ենթակա համայնքի և բնակավայրերի հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

«Շիրակ-11» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը ներառում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ քաղաքաշինական փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտներ՝ տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների համադրմամբ ապահովելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

Փորձաքննական պահանջ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի «Շիրակ-11» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան